

ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բաքուի կոտորածների առթիւ Վեհափառը՝ որպէս պատասխան իւր հեռագրի՝ Պարսից Արեգակնափայլ Շահից բաղդ ունեցաւ ստանալու հետեւեալ հեռագիրը։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ես ինքս շատ վշտացած Բաքուի դէպքերից, երջանիկ եմ հաւատացնելու, որ պարսկահայերը օրինապահ հպատակներ են, որոնց համար կարող եմ վստահացնել Ձեզ եւ պնդել իմ բարեացակամութիւնը եւ իմ բարձր հովանաւորութիւնը:

ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ.

Վեհափառ կաթուղիկոսի տուած հեռագրի բովանդակութիւնն էր հետեւեալը։

Թ Է Հ Ր Ա Ն

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ ՇԱՀՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ.

Ցաւ ի սիրտ լուայ, եթէ բաղմադարեան համադրացիք՝ Բաքուայ հայ և մուսուլման ազգաբնակութիւնն ընդհարուել է և երեք օրուայ ընթացքում տուել է անմեղ մարդկանց բազմաթիւ կորուստ, որից սարսում է մարդկային սիրտն ու զգացմունքը։ Այս մասին յայտնելով

Ձերդ Արքայական Մեծութեան, *աղաչեմ ափոփել և խնամել Ձեր Արքայական հզօր գայիսոնի հովանու ներքև գտնուած խոնարհ հօտս։*

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Վեհափառ Հայրապետը, երբ տեղեկացաւ, որ Կովկասի փոխարքայ է նշանակուած կոմս Վարանցով-Դաշկովը, ուղղեց նրան հետևեալ շնորհաւորութեան հեռագիրը.—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Նորին պայծառափայլութեան Կովկասի փոխարքայ կոմս ԻԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՎԱՐԱՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ.

Իմ և ամբողջ հայ հօտի կողմից ուրախութեամբ ողջունում եմ Ձերդ պայծառափայլութեան՝ այն բարձր պաշտօնի կոչուելու առթիւ, որին դուք ներկայ օրերին կոչուած էք կայսեր խնքնակալ կամքով։ Խորապէս հաւատում եմ, որ Ձեր՝ դէպի Կովկասի ազգաբնակութիւնն ունեցած բարեացակամութեամբ, որպէս ներկայացուցիչ Կովկասի հին տրադիցիաների, կը կարողանաք լուծել Կովկասը խաղաղացնելու և անդորրութիւն վերահաստատելու խնդիրը։ Խնդրում եմ Աստուածանից, որ ոյժ և կարողութիւն պարգևի Ձեզ՝ Ձեր մօտակայ մեծ աշխատանաց համար։

Ընդ սմին յանձնարարում եմ ներկայումս Պետերբուրգում գտնուած հոգևորական պատգամաւորութեան շնորհաւորել Ձեզ իմ և հայ ազգաբնակութեան կողմից։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Նորին պայծառափայլութիւն Կովկասի փոխարքայ կոմս Վարանցով-Դաշկովը Վեհափառ Հայրապետին ուղղել էր հետևեալ պատասխանը.

ԹԻՖԼԻԶ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Խորին շնորհակալութիւն եմ յայտնում Ձերդ Վեհափառութեան բարեացակամ հեռագրի համար։ Խնդրում եմ Աստուածանից պարգևել ինձ ոյժ և կարողութիւն կատարելու Կայսեր կամքը խաղաղացնելու ազգաբնակութիւնը և հաստատուն դարձնելու ջերմապէս սիրած Կովկասի խաղաղ զարգացումը։ Ցանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղօթքների։

Կոմս Վարանցով-Դաշկով.

Բաքուի դէպքի առթիւ Պարսից Թագաժառանգ և Ատրպատականի Փոխարքայից ստացուեց հետևեալ հեռագրական պատասխանը։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Ցաւում եմ անսպասելի դժբաղդութեան համար. յայտնում եմ ուրախութիւնս երկու կողմերի հաշտութեան առթիւ. գալով մեր հպատակ հայերին, նրանք մահմէդականների հետ բարի յարաբերութեանց մէջ են և միշտ բաղդաւոր մեր հովանու ներքոյ։

Թագաժառանգ (Վալիազ).

Վեհափառի կողմից Թագաժառանգին ուղղուած հեռագրի բովանդակութիւնն էր հետևեալը։

Վշտացած այն ողբալի և արիւնոտ դէպքերի համար, որոնք տեղի ունեցան Բաքուում և Երևանում երկու դաբաւոր և բարի դրացիների՝ հայերի և մահմէդականների մէջ, շնորհիւ իշխանութեան և երկու ժողովրդների հոգևորականութեան խաղաղութիւնը վերականգնուած է։ Խնդրում եմ Ձերդ Աղքայական բարձրութիւնից Ձեր հովանաւորութեան ներքոյ առնել Ձեր հաւատարիմ հայերին, որոնք միշտ վայելել են Իրանի իշխանութեան Հայրական հովանաւորութիւնը։

ՄԵԼՔԻԶԵԴԵՔ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Նովրուզի տօնը շնորհաւորելու առթիւ Վեհափառ Հայրապետը բախտ ունեցաւ ստանալու Պարսից Մուզաֆֆէր-էդդին շահից հետեւեալ հեռագիրը։

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Հայ միաբանութեան ցանկութիւնները ինձ մեծ բաւականութիւն պատճառեցին. սրտանց շնորհակալ եմ Ձեր սիրալիր զգացմունքների համար։

ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ.

Վեհի հեռագիրը հետեւեալն էր.

ԹԷՀՐԱՆ

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԻ ՇԱՀՆՇԱՀ ՄՈՒԶԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆԻՆ.

Տէր արքայ, ինձ երջանիկ եմ համարում շնորհաւորել Ձեզ Ս. Էջմիածնի և համայն հօտիս հետ Նովրուզի տօնը, մաղթել Ամենաբարձրեալից՝ շնորհել Ձեզ երկար և բարեպաստիկ կեանք Արքայական ամբողջ դերդաստանի հետ ի փառս Իրանի և Ձեր հպատակների երջանկութեան։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Մարտի 7-ին.

ԹԷՀՐԱՆ

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՇԱՀՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ.

Ինձ հեռագրում են Տփխիսից, որ Մէշէդում սկսուած է հայերի և քրիստոնեաների կոտորած և կողոպուտ։ Ես վստահ եմ, որ կարգը անմիջապէս կը վերականգնի և Ձեր հաւատարիմ հայ հպատակներն՝ ինչպէս միշտ՝ կը վայելեն Ձեր Արքայական Մեծութեան հովանաւորութիւնը։ Եւ ես

իմ Ծերութեան օրերում կաղօթեմ առ Աստուած վասն թանկագին կենաց Իրանի Մեծ Վեհապետին։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

10 մարտի 1905
Ս. Էջմիածին.

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Մեր բարձր պաշտպանութիւնը չէ դադարել երբէք դէպի հայերն ու դէպի քրիստոնեաները, որոնք բնակուում են Մեր Կայսրութեան մէջ։ Նոքա միշտ վայելել են և վայելում են ամենամեծ ապահովութիւն։ Ես հաւատի եմ, որ Ձեր Սրբութիւնը կը շարունակէ տալ նորանց իւր իմաստուն խորհուրդներ։

ՄՈՒՋԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ.

12 մարտի 1905
Թէհրան.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ. ԵՊ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Հոգ. Կառավարութեան Կարուց, որով լուծեցաւ պսակն տաճկահպատակ Անդրանիկայ Աբաջեանց ընդ կնոջն Վիրգինեայ Օվոյեանց վասն անկարողութեան առն, արտօնելով կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Թ. 101.